ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 07 >> ապրիլի 2015 թվական N: 54-Ա ք.Գյումրի

<<ԱՂԻՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ, ՓՈԽԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի N 118 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> ենթակետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. <<Աղինի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 2600000 Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով երկու հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերը բաժանել և փոխարկել 5200000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի, մեկ բաժնետոմսի արժեքը սահմանելով 1 Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2000 թվականի նոյեմբերի 6-ի <<Շիրակի մարզի թվով 47 առողջապահական ՊՓԲԸ-ների անվանափոխման և նրանց կանոնադրությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու մասին>> N 118 որոշմամբ հաստատված <<Աղինի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1-ին կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել <<Աղինի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Կարեն Վարդանյանին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին:

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2015 թվականի ապրիլի 7-ի N 54-Ա որոշման

<<ԱՂԻՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

Կանոնադրության 4.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

4.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5200000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 5200000 հասարակ (սովորական) բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1 Հայաստանի Հանրապետության դրամ:

Բոլոր 5200000 հասարակ (սովորական) բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԵԿԱՎԱՐ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ